Հավելված 4
«ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-1/19-ԲՆԱ» **ծածկագրով**
Էլեկտրոնային աճուրդի հրավերի

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀ ԱԱԾ-ՌԲՎ-1/19-ԲՆԱ/1

Հ.Հ. «___» _____ 2019 թ.

ՀՀ ազգային անվտանգության ծառայություն-ը ի դեմս Արամ Հակոբյան-ի, որը գործում է ՀՀ ազգային անվտանգության ծառայություն-ի կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և **ԼԵՅԿՈ ՍՊԸ-ն**, ի դեմս տնօրեն **Գ. Ալեքսանյանի**, որը գործում է **ԼԵՅԿՈ ՍՊԸ-ի** կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին։

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացուցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար։

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի։

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը։

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով։

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը։

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը։

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 15 օրից ավելի,

2.1.8 Ջնջել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին։

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները։

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին։

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը։

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.4 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.4 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.4.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.5 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է **1 005 499,98 (մեկ միլիոն հինգ հազար չորս հարյուր իննսունինը դրամ, իննսունութ լումա)** ՀՀ դրամ ներառյալ ԱԱՀ-ն[1]: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված պպրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ուղեցույցներ, ձեռնարկներ» ենթաբաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

---

[1] *Եթե Կատարողի կողմից գնային առաջարկը ներկայացվել է առանց ԱԱՀ-ի, ապա պայմանագիրը կնքելիս «ներառյալ ԱԱՀ-ն» բառերը հանվում են:*

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 5 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների ARMEPS համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Գնորդի կողմից այն ստորագրելու պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը[2]:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

---

2 Պետական բյուջեի միջոցների հաշվին պարտավորություններ չառաջացնող գնումների դեպքում սույն նախադասությունը կիրառելի չէ:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 4 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ ազգային անվտանգության	ԼԵՅԿՈ ՍՊԸ
ծառայություն	ք. Երևան, Ֆուչիկի 27/14
Նալբանդյան 104	«Ինեկոբանկ» ՓԲԸ
010-579-599	205002215023
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	01224924
900011301075	
01507079	
Արամ Հակոբյան	Գագիկ Ալեքսանյան
HAKOBYAN ARAM 3507590174 Digitally signed by HAKOBYAN ARAM 3507590174 DN: c=AM, sn=••••••••, givenName=••••, serialNumber=64f4b4da096f, cn=HAKOBYAN ARAM 3507590174 Date: 2019.03.18 16:51:51 +04'00'	Digitally signed by ALEKSANYAN GAGIK 1202259047 Date: 2019.03.15 12:26:59 AMT
/ստորագիր և դրոշմ/	/ստորագիր և դրոշմ/

Հավելված N 1
«   »   20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ապրանքի								
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գին/ՀՀ դրամ	ընդհանուր գին/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Մատակարարում
1	33141115/1	բժշկական բամբակ	Բամբակ բժշկական, հիգրոսկոպիկ հիգիենիկ բաժնեծրարված 100գ զանգվածով:Ֆիրմայի նշումով(Կցված ֆայլ՝lot_1_i_texnikakan_bnutagir.docx) ՀՀ	հատ	200,00	50000	250	Հասցե | Ենթակա քանակներ | Ժամկետներ Ք. Երևան, Ամիրյան 23 | 250 | 2019թ-ի դեկտեմբերի 15-ը՝
2	33141115/2	բժշկական բամբակ	Բամբակ բժշկական, հիգրոսկոպիկ հիգիենիկ բաժնեծրարված 50գ զանգվածով:Ֆիրմայի նշումով(Կցված ֆայլ՝lot_2_i_texnikakan_bnutagir.docx) ՀՀ	հատ	100,00	25000	250	Հասցե | Ենթակա քանակներ | Ժամկետներ Ք. Երևան, Ամիրյան 23 | 250 | 2019թ-ի դեկտեմբերի 15-ը՝
3	33141118/1	անձեռոցիկներ	16 սմ x14 սմ երկշերտ, թանզիվային, մանրէազերծ, անհատական փաթեթավորված N10 կամ N20 տուփերով: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով(Կցված ֆայլ՝lot_3_i_texnikakan_bnutagir.docx) ՀՀ	հատ	7,99	23970	3000	Հասցե | Ենթակա քանակներ | Ժամկետներ Ք. Երևան, Ամիրյան 23 | 3000 | 2019թ-ի դեկտեմբերի 15-ը՝
4	24311530/1	ջրածնի պերօքսիդ	Անգույն թափանցիկ հեղուկ, բժշկական, ջրածնի պերօքսիդի զանգվածային մասը 30-40 %, հրդեհապայթյունավտանգ, փաթեթվածքը՝ ապակյա շշեր, պոլիէթիլենային տակառներ, ալյումինե տակառներ, կոնտեյներներ, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):(Կցված ֆայլ՝ lot_4_i_texnikakan_bnutagir.docx) ՀՀ	լիտր	550,00	8250	15	Հասցե | Ենթակա քանակներ | Ժամկետներ Ք. Երևան, Ամիրյան 23 | 15 | 2019թ-ի դեկտեմբերի 15-ը՝
5	33141142/1	ներարկիչներ	Ներարկիչ միանգամյա օգտագործման համար 2.0 եռակոմպոնենտ 23G, 24G ասեղով Ներարկիչը պատրաստված է թափանցիկ, ոչ տոքսիկ նյութից: Հանձման	հատ	12,00	2400	200	Հասցե | Ենթակա քանակներ | Ժամկետներ

			պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով :(Կցված ֆայլ՝ lot_5_i_texnikakan_bnutagir.docx) Չինաստան					Ք. Երևան, Ամիրյան 23 | 200 | 2019թ-ի հունիսի 30-ը՝
6	33141142/2	ներարկիչներ	Ներարկիչ միանգամյա օգտագործման համար 3.0 եռակոմպոնենտ 23G ասեղով Ներարկիչը պատրաստված է թափանցիկ, ոչ տոքսիկ նյութից: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով :(Կցված ֆայլ՝ lot_6_i_texnikakan_bnutagir.docx) Չինաստան	հատ	11,60	8120	700	Հասցե | Ենթակա քանակներ | Ժամկետներ Ք. Երևան, Ամիրյան 23 | 700 | 2019թ-ի դեկտեմբերի 15-ը՝
7	33141142/3	ներարկիչներ	Ներարկիչ միանգամյա օգտագործման համար 5.0 եռակոմպոնենտ 23G ասեղով Ներարկիչը պատրաստված է թափանցիկ, ոչ տոքսիկ նյութից: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով(Կցված ֆայլ՝ lot_7_i_texnikakan_bnutagir.docx) Չինաստան	հատ	11,60	23200	2000	Հասցե | Ենթակա քանակներ | Ժամկետներ Ք. Երևան, Ամիրյան 23 | 2000 | 2019թ-ի դեկտեմբերի 15-ը՝
8	33141142/4	ներարկիչներ	Ներարկիչ միանգամյա օգտագործման համար 10.0 եռակոմպոնենտ 21G ասեղով Ներարկիչը պատրաստված է թափանցիկ, ոչ տոքսիկ նյութից: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով(Կցված ֆայլ՝ lot_8_i_texnikakan_bnutagir.docx) Չինաստան	հատ	18,40	18400	1000	Հասցե | Ենթակա քանակներ | Ժամկետներ Ք. Երևան, Ամիրյան 23 | 1000 | 2019թ-ի սեպտեմբերի 30-ը՝
9	33141142/5	ներարկիչներ	Ներարկիչ միանգամյա օգտագործման համար 20.0 եռակոմպոնենտ 21G ասեղով Ներարկիչը պատրաստված է թափանցիկ, ոչ տոքսիկ նյութից: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով(Կցված ֆայլ՝ lot_9_i_texnikakan_bnutagir.docx) Չինաստան	հատ	26,40	26400	1000	Հասցե | Ենթակա քանակներ | Ժամկետներ Ք. Երևան, Ամիրյան 23 | 1000 | 2019թ-ի սեպտեմբերի 30-ը՝
12	33121180/1	արյան ճնշման չափման սարք (տոնոմետր)	Տոնոմետր ֆոնենդոսկոպով մեխանիկական: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմայի նշումով: Գրանցված ապրանքանիշի հավաստագրի առկայություն:(Կցված ֆայլ՝ lot_12_i_texnikakan_bnutagir.docx) Չինաստան	հատ	2600,00	39000	15	Հասցե | Ենթակա քանակներ | Ժամկետներ Ք. Երևան, Ամիրյան 23 | 15 | 2019թ-ի հունիսի 30-ը՝

17	39224460/1	սրվակներ	Մուգ գույնի ապակյա սրվակներ կափարիչով Ֆորմատ: 30մլ Պահպանման պայմանները «պահել չոր տեղում», «կոտրվող է»(Կցված ֆայլ՝ lot_17_i_texnikakan_bnutagir.docx)	հատ	44,00	3519,99	80	Հասցե	Ենթակա քանակներ	Ժամկետներ
								Ք. Երևան, Ամիրյան 23	80	2019թ-ի հունիսի 30-ը
18	39224460/2	սրվակներ	Մուգ գույնի ապակյա սրվակներ կափարիչով Ֆորմատ: 250մլ Պահպանման պայմանները «պահել չոր տեղում», «կոտրվող է»(Կցված ֆայլ՝ lot_18_i_texnikakan_bnutagir.docx)	հատ	130,00	19500	150	Հասցե	Ենթակա քանակներ	Ժամկետներ
								Ք. Երևան, Ամիրյան 23	150	2019թ-ի հունիսի 30-ը
19	39224460/3	սրվակներ	Մուգ գույնի ապակյա սրվակներ կափարիչով Ֆորմատ:50մլ Պահպանման պայմանները «պահել չոր տեղում», «կոտրվող է»(Կցված ֆայլ՝ lot_19_i_texnikakan_bnutagir.docx)	հատ	70,00	3500	50	Հասցե	Ենթակա քանակներ	Ժամկետներ
								Ք. Երևան, Ամիրյան 23	50	2019թ-ի հունիսի 30-ը
20	39224460/4	սրվակներ	Մուգ գույնի ապակյա սրվակներ կափարիչով Ֆորմատ:100մլ Պահպանման պայմանները «պահել չոր տեղում», «կոտրվող է»(Կցված ֆայլ՝ lot_20_i_texnikakan_bnutagir.docx)	հատ	70,00	3500	50	Հասցե	Ենթակա քանակներ	Ժամկետներ
								Ք. Երևան, Ամիրյան 23	50	2019թ-ի հունիսի 30-ը
22	33141129/1	դիմակ	Բժշկական դիմակներ ռեզինե կապերով, Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը): Ֆիրմային նշումով(Կցված ֆայլ՝ lot_22_i_texnikakan_bnutagir.docx) Չինաստան	հատ	9,80	2940	300	Հասցե	Ենթակա քանակներ	Ժամկետներ
								Ք. Երևան, Ամիրյան 23	300	2019թ-ի հունիսի 30-ը
47	33161220/1	շպատել փայտե	Շպատել փայտե ոչ ստերիլ Ֆորմատ: հատ Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով(Կցված ֆայլ՝ lot_47_i_texnikakan_bnutagir.docx)	հատ	4,50	9000	2000	Հասցե	Ենթակա քանակներ	Ժամկետներ
								Ք. Երևան, Ամիրյան 23	2000	2019թ-ի դեկտեմբերի 15-ը
48	33141159/1	ձեռնոցներ բժշկան ոչ ստերիլ	N50 կամ այլ քանակի փաթեթավորումով տուփի, լատեքսից,տալկով,չախտահանված S,M,L չափսերի Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»(Կցված ֆայլ՝ lot_48_i_texnikakan_bnutagir.docx) Չինաստան	զույգ	28,00	92400	3300	Հասցե	Ենթակա քանակներ	Ժամկետներ
								Ք. Երևան, Ամիրյան 23	3300	2019թ-ի դեկտեմբերի 15-ը
49	33141158/1	վիրաբուժական ձեռնոցներ	N50 կամ այլ քանակի փաթեթավորումով տուփի, լատեքսից,տալկով,ախտահանված N6,5; N7; N7,5; N8 չափսերի : Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով:	զույգ	85,00	42500	500	Հասցե	Ենթակա քանակներ	Ժամկետներ
								Ք. Երևան, Ամիրյան 23	500	2019թ-ի դեկտեմբերի 15-ը

			Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»(Կցված ֆայլ՝ lot_49_i_texnikakan_bnutagir.docx) Չինաստան					
52	33141213/1	բժշկական վազելին	Քսուքանման զանգված առանց համի և հոտի, սպիտակ կամ դեղնասպիտակավուն գույնի: Լուծվում է եթերում և քլորոֆորմում, չի լուծվում ջրում և սպիրտում:Խառնվում է ցանկացած յուղի հետ, բացի գերչակի յուղից: Հանձման պահին պիտանիության ժամկետի առկայություն *(տես ծանոթությունը) Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»(Կցված ֆայլ՝ lot_52_i_texnikakan_bnutagir.docx) ՀՀ	կիլոգրամ	1500,00	3000	2	Հասցե / Ենթակա քանակներ / Ժամկետներ Ք. Երևան, Ամիրյան 23 / 2 / 2019թ-ի մարտի 31-ը՝
54	33141211/2	բժշկական այլ գործիքներ – պարագաներ	Հիգիենիկ սավան ոչ գործվածքային նյութից /ֆլիզելին/ 60սմ x40սմ չափի: Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»(Կցված ֆայլ՝ lot_54_i_texnikakan_bnutagir.docx) ՀՀ	հատ	50,00	24999,99	500	Հասցե / Ենթակա քանակներ / Ժամկետներ Ք. Երևան, Ամիրյան 23 / 500 / 2019թ-ի հունիսի 30-ը՝
57	33141211/5	բժշկական այլ գործիքներ – պարագաներ	Ժապավեն (ժգուտ) ռետինե արնեկանգ էստարիսի տիպի 1400x20-25 մմ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»(Կցված ֆայլ՝ lot_57_i_texnikakan_bnutagir.docx) Ուկրաինա	հատ	450,00	99000	220	Հասցե / Ենթակա քանակներ / Ժամկետներ Ք. Երևան, Ամիրյան 23 / 220 / 2019թ-ի դեկտեմբերի 15-ը՝
60	24321590/1	սուլֆացիլ նատրիում (Ալբուցիդ)	Սպիտակ բյուրեղական փոշի առանց հոտի:Հեշտ լուծվում է ջրում, գրեթե չի լուծվում սպիրտում Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»(Կցված ֆայլ՝ lot_60_i_texnikakan_bnutagir.docx) Չինաստան	կիլոգրամ	30000,00	6000	0.2	Հասցե / Ենթակա քանակներ / Ժամկետներ Ք. Երևան, Ամիրյան 23 / 0.2 / 2019թ-ի հունիսի 30-ը՝
61	33141110/1	վիրակապեր	ԱՎՓ/ԱՆՀԱՏԱԿԱՆ ՎԻՐԱՀԱՏԱԿԱՆ ՓԱԹԵԹ/մանրէազերծ մեկ հատ 7մ*10սմ բինտ ստերիլ, մանրէազերծ բարձիկ 10սմ*10սմ 2 հատ , փաթեթավորումը՝ անջրաթափանց ձգվող պոլիէթիլենային թաղանթ: Հանձման պահին պիտանելիության ժամկետի առկայություն*(տես ծանոթությունը):Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»(Կցված ֆայլ՝ lot_61_i_texnikakan_bnutagir.docx) ՀՀ	հատ	400,00	100000	250	Հասցե / Ենթակա քանակներ / Ժամկետներ Ք. Երևան, Ամիրյան 23 / 250 / 2019թ-ի հունիսի 30-ը՝

62	33141110/2	վիրակապեր	Վիրակապ բժշկական 7*14 ոչ մանէազերծ խտությունը +/- 36, քաշը՝34 կգ 35 գր: Ֆիրմայի նշումով Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»(Կցված ֆայլ՝lot_62_i_texnikakan_bnutagir.docx) ՀՀ	հատ	126,00	270900	2150	Հասցե: Ենթակա քանակներ: Ժամկետներ: Ք. Երևան, Ամիրյան 23: 2150: 2019թ-ի դեկտեմբերի 15-ը՝
63	33141114/1	բժշկական թանզիֆ (մարլյա) լայնությունը՝90սմ	Բժշկական թանզիֆ (մարլյա), երկարությունը 5 մետր, լայնությունը 90սմ, խտությունը 1սմ -30-32: Պահպանման պայմանները «պահել չոր տեղում»(Կցված ֆայլ՝lot_63_i_texnikakan_bnutagir.docx) ՀՀ	մետր	100,00	100000	1000	Հասցե: Ենթակա քանակներ: Ժամկետներ: Ք. Երևան, Ամիրյան 23: 1000: 2019թ-ի դեկտեմբերի 15-ը՝

ԳՆՈՐԴ
ՀՀ ազգային անվտանգության
ծառայություն
Նալբանդյան 104
010-579-599
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
900011301075
01507079
Արամ Հակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ

HAKOBYAN ARAM 3507590174
Digitally signed by HAKOBYAN ARAM 3507590174
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••, serialNumber=64f4b4da096f, cn=HAKOBYAN ARAM 3507590174
Date: 2019.03.18 16:52:23 +04'00'

ՎԱՃԱՌՈՂ
ԼԵՅԿՈ ՍՊԸ
ք. Երևան, Ֆուչիկի 27/14
«Ինեկոբանկ» ՓԲԸ
205002215023
01224924

Գագիկ Ալեքսանյան

/ստորագրություն/

Digitally signed by ALEKSANYAN GAGIK 1202590470
Date: 2019.03.15 12:27:27 AMT

Հավելված N 2
«   »   20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ապրանքի															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	*գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)*	*անվանումը*	*դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2019 թ-ին` ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	*փետրվար*	*մարտ*	*ապրիլ*	*մայիս*	*հունիս*	*հուլիս*	*օգոստոս*	*սեպտեմբեր*	*հոկտեմբեր*	*նոյեմբեր*	*դեկտեմբեր*	*Ընդամենը*
1	33141115/1	բժշկական բամբակ	0	0	0	0	0	20000	20000	20000	30000	30000	30000	50000	50000
2	33141115/2	բժշկական բամբակ	0	0	0	0	0	10000	10000	10000	15000	15000	15000	25000	25000
3	33141118/1	անձեռոցիկներ	0	0	7990	7990	7990	15980	15980	15980	15980	15980	15980	23970	23970
4	24311530/1	ջրածնի պերօքսիդ	0	0	0	0	0	5500	5500	5500	5500	5500	5500	8250	8250
5	33141142/1	ներարկիչներ	0	0	0	0	0	2400	2400	2400	2400	2400	2400	2400	2400
6	33141142/2	ներարկիչներ	0	0	0	0	0	4640	4640	4640	4640	4640	4640	8120	8120
7	33141142/3	ներարկիչներ	0	0	5800	5800	5800	11600	11600	11600	11600	11600	11600	23200	23200
8	33141142/4	ներարկիչներ	0	0	9200	9200	9200	9200	9200	9200	18400	18400	18400	18400	18400
9	33141142/5	ներարկիչներ	0	0	13200	13200	13200	13200	13200	13200	26400	26400	26400	26400	26400
12	33121180/1	արյան ճնշման չափման սարք (տոնոմետր)	0	0	0	0	0	39000	39000	39000	39000	39000	39000	39000	39000
17	39224460/1	սրվակներ	0	0	0	0	0	3519,99	3519,99	3519,99	3519,99	3519,99	3519,99	3519,99	3519,99
18	39224460/2	սրվակներ	0	0	0	0	0	19500	19500	19500	19500	19500	19500	19500	19500
19	39224460/3	սրվակներ	0	0	0	0	0	3500	3500	3500	3500	3500	3500	3500	3500
20	39224460/4	սրվակներ	0	0	0	0	0	3500	3500	3500	3500	3500	3500	3500	3500
22	33141129/1	դիմակ	0	0	0	0	0	2940	2940	2940	2940	2940	2940	2940	2940
47	33161220/1	շպատել փայտե	0	0	0	0	0	4500	4500	4500	4500	4500	4500	9000	9000
48	33141159/1	ձեռնոցներ բժշկան ոչ ստերիլ	0	0	30800	30800	30800	61600	61600	61600	61600	61600	61600	92400	92400

49	33141158/1	վիրաբուժական ձեռնոցներ	0	0	0	0	0	21250	21250	21250	21250	21250	21250	42500	42500
52	33141213/1	բժշկական վազելին	0	0	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000	3000
54	33141211/2	բժշկական այլ գործիքներ – պարագաներ	0	0	0	0	0	24999,99	24999,99	24999,99	24999,99	24999,99	24999,99	24999,99	24999,99
57	33141211/5	բժշկական այլ գործիքներ – պարագաներ	0	0	36000	36000	36000	67500	67500	67500	67500	67500	67500	99000	99000
60	24321590/1	սուլֆացիլ նատրիում (Ալբուցիդ)	0	0	0	0	0	6000	6000	6000	6000	6000	6000	6000	6000
61	33141110/1	վիրակապեր	0	0	0	0	0	100000	100000	100000	100000	100000	100000	100000	100000
62	33141110/2	վիրակապեր	0	0	0	0	0	126000	126000	126000	126000	126000	126000	270900	270900
63	33141114/1	բժշկական թանզիֆ (մարլյա) լայնությունը՝90սմ	0	0	0	0	0	0	0	0	0	0	0	100000	100000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*
*** Իրավերում գումարները նշվում են տոկոսով, իսկ պայմանագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ*

ԳՆՈՐԴ
ՀՀ ազգային անվտանգության
ծառայություն
Նալբանդյան 104
010-579-599
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն
900011301075
01507079
Արամ Հակոբյան

/ստորագրություն/
Կ.Տ

HAKOBYAN ARAM 3507590174

Digitally signed by HAKOBYAN ARAM 3507590174
DN: c=AM, sn=••••••••, givenName=••••, serialNumber=64f4b4da096f, cn=HAKOBYAN ARAM 3507590174
Date: 2019.03.18 16:52:50 +04'00'

ՎԱՃԱՌՈՂ
ԼԵՅԿՈ ՍՊԸ
ք. Երևան, Ֆուչիկի 27/14
«Ինեկոբանկ» ՓԲԸ
205002215023
01224924

Գագիկ Ալեքսանյան

/ստորագրություն/
Կ.Տ

Digitally signed by ALEKSANYAN GAGIK 1202590470
Date: 2019.03.15 12:27:41 AMT

ԱՂՅԻՍԱԿ N 1

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Ապրանքի		Նախատեսվում է գնել 2019թ.				Ընդամենը
			I եռամսյակ	II եռամսյակ	III եռամսյակ	IV եռամսյակ	
	Անվանումը	Չափման միավորը	քանակը	քանակը	քանակը	քանակը	քանակը
1	2	3	4	5	6	7	8
1	Բժշկական բամբակ	հատ	0	100	50	100	250
2	Բժշկական բամբակ	հատ	0	100	50	100	250
3	Անձեռոցիկներ	հատ	1000	1000	0	1000	3000
4	Ջրածնի պերօքսիդ	լիտր	0	10	0	5	15
5	Ներարկիչներ	հատ	0	200	0	0	200
6	Ներարկիչներ	հատ	0	400	0	300	700
7	Ներարկիչներ	հատ	500	500	0	1000	2000
8	Ներարկիչներ	հատ	500	0	500	0	1000
9	Ներարկիչներ	հատ	500	0	500	0	1000
12	Արյան ճնշման չափման սարք (տոնոմետր)	հատ	0	15	0	0	15
17	Սրվակներ	հատ	0	80	0	0	80
18	Սրվակներ	հատ	0	150	0	0	150
19	Սրվակներ	հատ	0	50	0	0	50
20	Սրվակներ	հատ	0	50	0	0	50
22	Դիմակ	հատ	0	300	0	0	300

47	Շպատել փայտե	հատ	0	1000	0	1000	2000
48	Ձեռնոցներ բժշկական ոչ ստերիլ	զույգ	1100	1100	0	1100	3300
49	Վիրաբուժական ձեռնոցներ	զույգ	0	250	0	250	500
52	Բժշկական վազելին	կգ	2	0	0	0	2
54	Բժշկական այլ գործիքներ և պարագաներ	հատ	0	500	0	0	500
57	Բժշկական այլ գործիքներ և պարագաներ	հատ	80	70	0	70	220
60	Սուլֆացիլ նատրիում (Ալբուցիդ)	կգ	0	0.2	0	0	0.2
61	Վիրակապեր	հատ	0	250	0	0	250
62	Վիրակապեր	հատ	0	1000	0	1150	2150
63	Բժշկական թանզիֆ (մարլյա) լայնությունը՝ 90 սմ	մետր	0	0	0	1000	1000

Ծանոթություն

* Հանձնելու պահին մնացորդային պիտանելիության ժամկետը՝ մինչև 1 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 75% , 1-2 տարի պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 2/3, 2 տարուց ավել պիտանելության ժամկետ ունեցող ապրանքների համար առնվազն՝ 15 ամիս:

Ապրանքի տեղափոխումը ավտոտրանսպորտով, բեռնաթափումը՝ բանվորական ուժով կատարվում է մատակարարի կողմից: Ապրանքը մատակարարվում է ք. Երևան, Ամիրյան 23 հասցեով:

Տեխնիկական բնութագրերով բոլոր հղումների դեպքում Գնումների մասին ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի, 5-րդ մասի համաձայն հասկանալ կամ համարժեքը:

Հավելված N 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները, կամ մատուցել է հետևյալ ծառայությունները, կամ մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների, կատարված աշխատանքների, մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն